# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Գրիգ-Բիզնես ՍՊԸ-ն ՀՀ-ՍՄԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | սեղմված բնական գազ | սեղմված բնական գազ | ՌԴ | Տեխնիկական բնութագիր՝ Սեղմված բնական գազ, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների իրար հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն: Գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազագլանոթային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 150 0C, բայց չպետք է գերազանցի 600 0C ջերմաստիճանը: Մատակարարումը՝ կտրոնային: Ներկայացնել որակի համապատասխանության սերտիֆիկատ, եթե այն կիրառելի է տվյալ ապրանքի համար: Գազալցակայանը պետք է հանդիսանա ԱԳԼՃԿ և բավարարի ՀՀ Կառավարության 28.08.2008թ. ««Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»» թիվ 1101 որոշման պահանջներին: Գազալցակայանը պետք է ունենա համայնքի ղեկավարի կողմից տրամադրված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն` համաձայն ««Տեղական ինքնակառավարման մասին»» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների: Գազալցակայանը պետք է հանդիսանա օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված` հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար, համայնքապետարանից առնվազն 15 կմ շառավղով գործող) կայան` համաձայն ««Առևտրի և ծառայությունների մասին»» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի պահանջների: Մատակարարման ժամկետը` Պայմանագրի կնքման օրից 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օրացուցային օր մինչև 2022թ. դեկտեմբերի 31, ըստ պատվիրատուի պահանջարկի՝ ոչ ավել 20 տոկոսի չափով, մատակարարումը 1 օրվա ընթացքում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Григ-Бизнес ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ-ՍՄԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |